ՀՖՖ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 2020

2019/2020 ՄՐՑԱՇՐՋԱՆ

ՀՖՖ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 2020

ՀՖՖ Արտոնագրման բաժին

Օգոստոս 2020 թ.

Հարգելի բարեկամ,

ՀՖՖ Արտոնագրման բաժինը Ձեզ է ներկայացնում ՀՖՖ ակումբների արտոնագրման համեմատական վերլուծության ութերորդ հրատարակությունը 2019/2020 թվականների մրցաշրջանի և 2019 թվականի ֆինանսական տարվա վերաբերյալ: Այն ամբողջովին ներկայացնում է հայկական պրոֆեսիոնալ ակումբային ֆուտբոլը՝ներառելով ՀՀ Բարձրագույն խմբի ակումբների վերաբերյալ համեմատական վերլուծություն: Այս փաստաթուղթը հրատարակվում է ութերորդ տարին անընդմեջ և շարունակում է հանդիսանալ ամենամյա սկզբունքով թողարկվող միակ փաստաթուղթը, որը պարունակում է հայկական ակումբների և հայկական ֆուտբոլի վերաբերյալ ֆինանսական, ենթակառուցվածքային, մարզչական, կադրային, իրավական և այլ կարևոր տեղեկատվություն:

Զեկույցն իր մեջ ներառում է 2019/2020 թվականների մրցաշրջանի և 2019 թվականի ֆինանսական տարվա ընթացքում հավաքագրված ողջ տեղեկատվությունը, որն ակումբները ներկայացրել են ՀՖՖ ակումբների արտոնագրման և վերահսկողության գործընթացի շրջանակներում: Զեկույցում նաև անդրադարձ է կատարվում 2020/2021 թվականների մրցաշրջանի արտոնագրման գործընթացին և արտոնագրային որոշումներին, քանի որ նշված մրցաշրջանի արտոնագրերն ակումբներին շնորհվել են 2019/2020 թվականների մրցաշրջանի ընթացքում:

Ակումբների արտոնագրման համեմատական զեկույցը իրականություն է դարձել մեր ակումբների կողմից ցուցաբերած աջակցության և պատրաստակամության շնորհիվ, որոնք պատշաճ կերպով տրամադրել են զեկույցի մեջ ներառված համապատասխան տեղեկատվությունը: Օգտվելով առիթից՝ մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում ՀՀ Բարձրագույն և Առաջին խմբերի բոլոր ակումբներին իրենց աջակցության և սույն զեկույցի կազմմանը մասնակցություն ցուցաբերելու համար:

Զեկույցում ներկայացված են նաև ՀՖՖ կողմից մշակված նոր երկարաժամկետ ռազմավարական ծրագրի շրջանակներում արդեն իսկ գրանցած ձեռքբերումները, մասնավորապես՝ նոր ենթակառուցվածքների կառուցումը, նոր համագործակցությունները և այլն:

Վստահ ենք, որ ՀՖՖ ակումբների արտոնագրման «Համեմատական վերլուծություն» զեկույցն անկասկած կնպաստի հայկական ֆուտբոլում թափանցիկության մակարդակի բարձրացմանն, ինչն էլ, իր հերթին, հանդիսանում է ՀՖՖ քաղաքականության անկյունաքարերից մեկը:

Արթուր Ազարյան

ՀՖՖ Գլխավոր քարտուղար

ՀՖՖ Ակումբների արտոնագրման և վերահսկողության նախագծի ղեկավար

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. Արտոնագրման գործընթաց 4
ԳԼՈՒԽ 2. Հաճախելիություն 12
ԳԼՈՒԽ 3. Ֆուտբոլիստներ եվ լեգիոներներ 18
ԳԼՈՒԽ 4. Եկամուտներ եվ ծախսեր 23
ԳԼՈՒԽ 5. Մեդիա եվ մարքեթինգ 29
ԳԼՈՒԽ 6. Ձեռքբերումներ 35
ԳԼՈՒԽ 7. Սեմինարներ և հանդիպումներ 39

ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ՀՖՖ Ակումբների արտոնագրման համեմատական վերլուծությունը շարունակում է մնալ իր տեսակի մեջ հայկական ֆուտբոլին վերաբերող միակ ուսումնասիրությունը՝ մի կողմից հանդիսանալով ակումբային ֆուտբոլի ուղեցույցը, մյուս կողմից՝ կատարելով ժամանակակից ֆուտբոլի կարևոր միտումների արձանագրման և փաստաթղթավորման գործընթացը: Վերլուծությունը, հիմնվելով փաստերի վրա, ներկայացնում է անցնող մրցաշրջանում արձանագրված, և՛ դրական, և՛ բացասական միտում ունեցող իրադարձությունները: ՀՖՖ Արտոնագրման բաժինը սույն վերլուծությունը կազմել է ՀՖՖ ակումբների կողմից ներկայացված արտոնագրման 5 չափանիշների (մարզական, կադրային և վարչական, իրավական, ենթակառուցվածքային և ֆինանսական) հիման վրա՝ պահպանելով անկախության և գաղտնիության պատշաճ մակարդակը:

Վերլուծության հիմնական առանցքն են կազմում նախորդ 16 մրցաշրջանների ընթացքում ՀՖՖ Ակումբների արտոնագրման գործընթացի մասին տեղեկատվությունը, կայացված որոշումների համեմատությունները՝ ըստ Ազգային, Առաջին խմբի և ՈՒԵՖԱի արտոնագրման գործընթացների, մարզասերների՝ ներքին առաջնություններին խաղերի հաճախելիությունը, ՀՀ Բարձրագույն և Առաջին խմբերի հանդիպումներին մասնակցած ֆուտբոլիստների տարիքային առանձնահատկությունները, ինչպես նաև ակումբների ֆինանսական հաշվետվությունների վրա հիմված տեղեկությունները եկամուտների ու ծախսերի վերաբերյալ:

2020/2021 մրցաշրջանի Ազգային արտոնագիր ստանալու համար դիմել է 12 ակումբ: ՀՀ Բարձրագույն խմբի առաջնությանը մասնակցելու իրավունք ընձեռող արտոնագիր ստացել է 11 ակումբ: Դիմորդ ակումբներից «ՖԱ Վեստ Արմենիա» ակումբի արտոնագիրը մերժվել է անհրաժեշտ որակավորում ունեցող գլխավոր մարզիչ և մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման ծրագրի ղեկավար չունենալու հիմքով:

2020 թվականին ՀՖՖ-ն առաջին անգամ սահմանեց արտոնագրման գործընթաց ՀՀ ֆուտբոլի Առաջին խմբի առաջնության մասնակցության համար: ՀՀ ֆուտբոլի Առաջին խմբի 2020/2021թթ. առաջնության արտոնագիր ստանալու համար դիմել էին 10 ակումբներ: Առաջին խմբի 2020/2021թթ. առաջնությունում հանդես գալու արտոնագիր է ստացել 4 ակումբ՝ «ՖԱ Վեստ Արմենիա», «Լեռնային Արցախ» ՖԱ, «Նորավանք ՍԱ», «Սևան ՖԱ»: Ակումբների արտոնագրման կոմիտեն մերժել է 6 ակումբների՝ ՖԱ «Անի», «ՖԱ «Արագած»», «ԴՖԱ», «ՖԱ Ինտեր», «ՖԱ Տորպեդո», «Մասիս» ՖԱ արտոնագրերը:

2020/2021 մրցաշրջանի ՈԵՖԱի արտոնագիր ստանալու համար դիմել է 9 ակումբ: Բոլոր 9 ակումբներն էլ բավարարել են ՈՒԵՖԱի արտոնագիր ստանալու համար սահմանված չափանիշները և ստացել են 2020/2021 մրցաշրջանում եվրագավաթներում հանդես գալու իրավունք ընձեռող արտոնագիր:

11

ԱՉԳԱՅԻՆ ԱՐՏՈՆԱԳԻՐ

4

ԱՌԱՋԻՆ ԽՄԲԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԱՐՏՈՆԱԳԻՐ

9

ՈՒԵՖԱ-Ի ԱՐՏՈՆԱԳԻՐ

2004-2020/2021 թթ.
ՀՖՖ Ակումբների ստացած, մերժված և հետ կանչված արտոնագրեր



2009-2020/2021 թթ.
ՀՖՖ Ակումբների ստացած և մերժված ՈՒԵՖԱ-ի արտոնագրեր



2020/2021 թթ.
ՀՖՖ Ակումբների ստացած և մերժված Առաջին խմբի առաջնության արտոնագրերը



ԳԼՈՒԽ 2.
ՀԱՃԱԽԵԼԻՈՒԹՅՈՒՆ

ՀԱՃԱԽԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Անցկացնելով համեմատականներ 2018/2019 (57,690 հանդիսական) և 2019/2020 (32,480 հանդիսական) մրցաշրջանների ՀՀ Բարձրագույն խմբի առաջնության հաճախելիության ցուցանիշների միջև՝ ակնհայտ է դառնում, որ երկրպագուների ընդհանուր թիվը նվազել է: Նվազումը կազմել է 43,7 %: Երկրպագուների ընդհանուր թվի նվազումը մեծամասամբ կապված է ՀՀ-ում 2020 թվականի մարտի 16-ին հայտարարված արտակարգ դրության և մրցաշրջանի 2-րդ հատվածը Covid-19 համավարակի պատճառով առանց հանդիսականների անցկացնելու որոշման հետ: Եթե հաշվի առնենք 2019/2020 մրցաշրջանի 1 խաղի միջին հաճախելիության ցուցանիշը՝ 387 հանդիսական (հաշվի չառնելով առանց հանդիսականների անցկացված հանդիպումները), ապա կտեսնենք, որ 2018/2019 մրցաշրջանի (1 խաղին՝ միջինը 400 հանդիսական) համեմատ այս ցուցանիշը նվազել է: Այս ցուցանիշի նվազումը մեծապես կապված է Երևան ՖԱ-ի տնային հանդիպումների հաճախելիության ցածր ցուցանիշներով (1 խաղին՝ միջինը 145 հանդիսական): «Երևան» ՖԱ-ն մրցաշրջանի կեսից դուրս եկավ պայքարից և, եթե հաշվի չառնենք «Երևան» ՖԱ-ի տնային հանդիպումների հաճախելիության ցուցանիշները, ապա ՀՀ Բարձրագույն խմբի առաջնության հանդիպումների միջին հաճախելիությունը կկազմի 408 հանդիսական:

Սեփական հարկի տակ հանդիպումների ժամանակ երկրպագուների ամենամեծ բանակը ունեցել է Գյումրիի «Շիրակ» ֆուտբոլային ակումբը, որի տնային հանդիպումները 2019/2020 մրցաշրջանում մարզադաշտից դիտել է 4,900 հանդիսական (միջինը 1 խաղում՝ 612 հանդիսական): Տնային հանդիպումներին ամենից քիչ հաճախելիություն է ունեցել «Երևան» ֆուտբոլային ակումբը՝ 1,020 հանդիսական (միջինը՝ 145 հանդիսական): «Երևան» ֆուտբոլային ակումբից հետո հաճախելիության վատագույն ցուցանիշն ունի «Գանձասար-Կապան» ՖԱ-ն՝ 2270 հանդիսական (միջինը՝ 252 հանդիսական): «Գանձասար-Կապան» ՖԱ-ի հաճախելիության ցածր ցուցանիշը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ Կապանը ներկայացնող թիմն արդեն մի քանի տարի է իր տնային հանդիպումներն անցկացնում է Երևանում: Ոչ շատ վաղ անցյալում՝ 2015/2016 մրցաշրջանում, «ԳանձասարԿապան»ը հաճախելիության ցուցանիշով եղել է առաջատար (17,850 հանդիսական, միջինը՝ 1 խաղում 1,373 հանդիսական):

Նախորդ մրցաշրջանի հաճախելիության առաջատար «Ուրարտու» ՖԱ-ն զիջել է իր դիրքերը՝ հայտնվելով 3րդ տեղում: «Ուրարտու» ՖԱ-ին 2019/2020 մրցաշրջանում տնային խաղերի ժամանակ աջակցել է միջինը 456 հանդիսական, մինչդեռ 2018/2019 մրցաշրջանում հանդիսականների միջին թիվը կազմել է 690:

Նվազել է նաև ՀՀ Գավաթի 2019/20 թթ. խաղարկության միջին հաճախելիության ցուցանիշը: Վերջինս 2018/19 թթ. կազմում էր 377 հանդիսական, սակայն այս մրցաշրջանում այդ թիվը նվազել և կազմել է 304 հանդիսական: ՀՀ Գավաթի 2019/20 թթ. խաղարկության միջին հաճախելիության նվազման հիմնական պատճառ է հանդիսացել այն, որ Գավաթի եզրափակիչը անցկացվել է առանց հանդիսականների: 2018/2019 մրցաշրջանում եզրափակիչ հանդիպման հանդիսականների քանակը կազմել է ամբողջ մրցաշարի հանդիսականների քանակի 50%-ը:

ՀՀ ֆուտբոլի 2015/2016թթ. - 2019/2020 թթ.
Բարձրագույն խմբի առաջնության հաճախելիության ցուցանիշներ



ՀՀ ֆուտբոլի 2015/2016թթ.-2019/2020 թթ.
Բարձրագույն խմբի առաջնությունների ակումբների հաճախելիության ցուցանիշներ



ՀՀ ֆուտբոլի 2019/2020 թթ.
Բարձրագույն խմբի առաջնության ակումբների տնային հանդիպումների հաճախելիության ցուցանիշներ



ՀՀ ֆուտբոլի 2019/2020 թթ,
Բարձրագույն խմբի առաջնության ակումբների տնային հանդիպումների միջին հաճախելիության ցուցանիշներ



ԳԼՈՒԽ 3.
ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐ ԵՎ ԼԵԳԻՈՆԵՐՆԵՐ

ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐ ԵՎ ԼԵԳԻՈՆԵՐՆԵՐ

Ալաշկերտ	27,50 տարեկան
Արարատ	26,09
Արարատ-Արմենիա	26,50
Գանձասար-Կապան	25,71
Երևան	24,64
Լոռի	24,38
Նոա	24,17
Շիրակ	24,53
Ուրարտու	24,87
Փյունիկ	24,81
Ընդհանուր	**25,32**

Հաշվետվության այս հատվածում ներկայացված է ՀՀ Բարձրագույն խմբի առաջնության ֆուտբոլիստների տարիքային համեմատական վերլուծությունը:

ՀՀ ֆուտբոլի Բարձրագույն խմբի 2019/2020 թթ. առաջնությանը մասնակցել է (հայտավորված է եղել առնվազն առաջնության 1 խաղի) ընդհանուր 339 ֆուտբոլիստ: Առաջնությանը մասնակցած 339 ֆուտբոլիստներից 177ը եղել են լեգիոներներ (ներառյալ ԵԱՏՄ երկրներից ֆուտբոլիստները): ՀՀ ֆուտբոլի Բարձրագույն խմբի 2018/2019 թթ. առաջնությունում հանդես է եկել 162 լեգիոներ ֆուտբոլիստ: 2018/2019 մրցաշրջանի համեմատ ավելացել է նաև լեգիոներ ֆուտբոլիստների տեսակարար կշիռը ֆուտբոլիստների ընդհանուր թվի մեջ՝ 46,02%ի փոխարեն կազմելով 52,21%: Հայտավորած արտասահմանցի ֆուտբոլիստների քանակով առաջատարը «Լոռի» ֆուտբոլային ակումբն է՝ 29 լեգիոներ: «Լոռի» ՖԱ-ին հաջորդում է «Արարատ» ՖԱ-ն, որի կազմում 2019/2020 մրցաշրջանում հայտավորված է եղել 26 լեգիոներ: Ամենաքիչ քանակով լեգիոներներներ հանդես են եկել «Շիրակ» ՖԱ-ում՝ 7 լեգիոնական և «ԳանձասարԿապան» ՖԱ-ում՝ 6 լեգիոնական:

ՀՀ ֆուտբոլի Բարձրագույն խմբի 2019/2020 թթ. առաջնությանը մասնակցած ֆուտբոլիստների միջին տարիքը 25,32 է: Նա խորդ առաջնությունում ֆուտբոլիստների միջին տարիքը 25,02 էր:

ՀՀ ֆուտբոլի Բարձրագույն խմբի 2018/2019 թթ. առաջնությանը մասնակցած թիմերից ամենաերիտասարդ կազմը ունեցել է

«Նոա» ՖԱն: «Նոա» ՖԱի ֆուտբոլիստների միջին տարիքը եղել է 24,17: 2019/2020 մրցաշրջանում «Նոա» ՖԱի կազմում հան դես է եկել մինչև 25 տարեկան 24 ֆուտբոլիստ:

Նախորդ առաջնության «ամենաերիտասարդ» թիմը՝ «Լոռի» ՖԱ-ն (ֆուտբոլիստների միջին տարիքը՝ 24,38) նահանջել է 2-րդ հորիզոնական:

ՀՀ ֆուտբոլի Բարձրագույն խմբի 2019/2020 թթ. առաջնության «ամենատարեց» թիմն «Ալաշկերտ » ՖԱ-ն է (ֆուտբոլիստների միջին տարիքը՝ 27,50): «Ալաշկերտ» ՖԱի կազմում գերակշիռ մաս են կազմել 26 տարեկան և ավելի բարձր տարիք ունեցող ֆուտբոլիստները՝ 32 ֆուտբոլիստ:

«Փյունիկ», «Լոռի», «Նոա» և «Շիրակ» ֆուտբոլային ակումբները մեծամասամբ ապավինել են մինչև 25 տարեկան ֆուտբոլիստ-

ներին: «Փյունիկ» ՖԱի ֆուտբոլիստների միջին տարիքը կազմել է 24,81, «Շիրակ» ՖԱ-ինը՝ 24,53:

ՀՀ ֆուտբոլի Բարձրագույն խմբի 2019/2020 թթ. առաջնությունում հանդես եկած բոլոր ֆուտբոլիստների միջին տարիքը 25,32 է:

ՀՀ ֆուտբոլի 2019/2020 թթ. Բարձրագույն խմբի առաջնության ակումբների տարիքային ցուցանիշներ



ՀՀ ֆուտբոլի 2019/2020 թթ.
Բարձրագույն խմբի առաջնության ակումբներում հանդես եկած լեգիոներների քանակ



ՀՀ ֆուտբոլի 2015/2016-2019/2020 թթ.
Բարձրագույն խմբի առաջնության ակումբներում հանդես եկած ֆուբոլիստներ և լեգիոներներ



ԳԼՈՒԽ 4.
ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ՇԱԽՍԵՐ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ

Համաձայն ՀՖՖ Ակումբների արտոնագրման կանոնակարգի՝ Բարձրագույն խմբի բոլոր ակումբների ֆինանսական հաշվետվությունները ենթարկվում են տարեկան պարտադիր աուդիտի, որի արդյունքները ներկայացվում են ՀՖՖ Արտոնագրման բաժին: Այս տարին էլ բացառություն չէր այդ տեսանկյունից:

Ֆինանսական չափանիշի պատշաճ իրագործումը պարտադիր պահանջ է՝ ՈՒԵՖԱի մրցաշարերին մասնակցելու արտոնագիր ստանալու համար: 2020 թվականին Բարձրագույն խմբի 10 ակումբներից 9ը դիմել են ՈԵՖԱի մրցաշարերին մասնակցելու արտոնագիր ստանալու համար: Բոլոր 9 ակումբները բավարարել են վերոնշյալ չափանիշը՝ հնարավորություն ստանալով մասնակցելու 2020/2021 թվականների ՈՒԵՖԱի կողմից կազմակերպվող ակումբային մրցաշարերին:

Ֆինանսական չափանիշի պահանջներին բավարարելու համար ակումբները պետք է ներկայացնեն ֆինանսական վիճակի, համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների, դրամական հոսքերի, ինչպես նաև սեփական աշխատակիցների, հարկային և սոցապ մարմինների և այլ ակումբների նկատմամբ ժամկետանց վճարումների բացակայության վերաբերյալ հաշվետվություններ:

Ստացված տեղեկատվության ուսումասիրությունից պարզ է դառնում, որ ի համեմատություն 2018 թվականի՝ 2019 թվականի հաշվետու տարում ՀՀ ակումբների ընդհանուր եկամուտները աճել են շուրջ 29.08%ով: 2017 թվականի համեմատությամբ՝ 2018 թվականին աճը կազմել է 33,46%: 2019 թվականին ՀՀ ակումբների ընդհանուր ծախսերը նույնպես աճել են անհամեմատ մեծ ցուցանիշով՝ 60,45%ով: Նախորդ տարում աճը կազմել էր 54,21%:

Հարկ է նշել, որ ակումբներից մի քանիսը եկամուտներ են ստացել հեռարձակման իրավունքներից: Սակայն, այդուհանդերձ, ակումբների հիմական եկամտի աղբյուրները շարունակում են մնալ ՈՒԵՖԱից ստացված պարգևավճարները, համերաշխության գումարները և ակումբների սեփականատերերի/հիմնադիրների անձնական ներդրումները:

ՀՀ ֆուտբոլի 2019/2020 թթ.
Բարձրագույն խմբի առաջնության ակումբների 2019թ. ֆինանսական տարվա ծախսերը (հազար ՀՀ դրամ)



ՀՀ ֆուտբոլի 2019/2020 թթ.
Բարձրագույն խմբի առաջնության ակումբների 2019թ. ֆինանսական տարվա եկամուտներ (հազար ՀՀ դրամ)



ՀՀ Ֆուտբոլի Բարձրագույն խմբի առաջնության ակումբների 2013-2019թթ. եկամուտների աճի դինամիկա



ՀՀ ֆուտբոլի 2019/2020 թթ.
Բարձրագույն խմբի առաջնության ակումբների 2019թ. ֆինանսական տարվա հաշվապահական հաշվեկշիռը (հազար ՀՀ դրամ)



ԳԼՈՒԽ 5.
ՄԵԴԻԱ ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳ

ՄԵԴԻԱ

Վերջին տարիներին հայկական ակումբները սկսել են ավելի մեծ ուշադրություն դարձնել իրենց ակտիվությանը սոցիալական և լրատվական հարթակներում: Այս ակտիվությունը բերել է նրան, որ վերջին շրջանում ավելացել է նաև ակումբների հետևորդների թիվը տարբեր սոցիալական հարթակներում: Հայկական ակումբներից ոմանք հիմնականում շեշտը դնում են 1 սոցիալական ցանցում ակտիվություն ցուցաբերելու վրա (հիմնականում՝ facebook.com), որոշներն էլ փորձում են հավասարաչափ ակտիվ գործունեություն ծավալել գրեթե բոլոր սոցիալական հարթակներում:

ՀՀ Բարձրագույն խմբի 2019/2020 թթ. առաջնության բոլոր ակումբները հետևորդների ամենամեծ բանակն ունեն facebook.com կայքում: Facebook-ում ամենից շատ հետևորդ ունի «Ուրարտու» ՖԱ-ն՝ 18,450 հետևորդ: «Ուրարտու» ՖԱ-ին հաջորդում է «Լոռի» ՖԱ-ն, որն ունի 18,071 հետևորդ: Facebook-ում հետևորդների քանակով 3-րդ հորիզոնականում է «Արարատ-Արմենիա» ՖԱ-ն՝ 16,187 հետևորդ: Ամենից քիչ հետևորդներ facebook-ում ունի «Երևան» ՖԱ-ն՝ 2,717:

Եթե հաշվենք բոլոր սոցիալական հարթակներում ակումբների հետևորդների ընդհանուր քանակը, ապա այս դեպքում առաջատարը կլինի «Փյունիկ» ՖԱ-ն է՝ 29,589 հետևորդ: «Փյունիկ» ՖԱ-ի՝ նման ցուցանիշով առաջին հորիզոնականում գտնվելը պայմանավորված է նրանով, որ ակումբը փորձում է ակտիվ լինել գրեթե բոլոր հարթակներում: Փյունիկ» ՖԱ-ն եզակի ակումբներից է, որն ունի պաշտոնական էջ Tik-Tok-ում (1236 հետևորդ): Բոլոր սոցիալական հարթակներում հետևորդների ընդհանուր քանակով հաջորդ ակումբը «Ուրարտու» ՖԱ-ն է՝ 27,946 հետևորդ, իսկ 3-րդ տեղում՝ «Արարատ-Արմենիա» ՖԱ-ն՝ 27,888 հետևորդ:

«Լոռի», «Նոա», «Շիրակ», «Ուրարտու» և «Փյունիկ» ֆուտբոլային ակումբներն ունեն պաշտոնական էջեր բոլոր հիմնական սոցիալական հարթակներում (Facebook.com, Instagram, Youtube, Twitter, Vkontakte): «Արարատ-Արմենիա», «Ալաշկերտ» և «Գանձասար-Կապան» ֆուտբոլային ակումբները չունեն պաշտոնական էջեր Vkontakte սոցցանցում, «Արարատ» ՖԱ-ն՝ Youtube-ում և Vkontakte-ում: «Երևան» ՖԱ-ն չունի պաշտոնական էջեր Yotube-ում, Vkontakte-ում և Twitter-ում:

ՀՀ Ֆուտբոլի Բարձրագույն խմբի 2019/2020 թթ. առաջնության ակումբների հետևորդների ընդհանուր քանակը սոցիալական հարթակներում (30.08.20-ի դրությամբ)



ՀՀ Ֆուտբոլի Բարձրագույն խմբի 2019/2020 թթ. առաջնության ակումբների հետևորդների թիվը ըստ սոցիալական հարթակների (30.08.20-ի դրությամբ)



ՄԱՐԶԱՀԱԳՈՒՍՏԻ ԱՊՐԱՆՔԱՆԻՇՆԵՐ ԵՎ ՏԻՏՂՈՍԱՅԻՆ ՀՈՎԱՆԱՎՈՐՆԵՐ

Ակումբ	Խաղային հանդերձանքի ապրանքանիշ	Տիտղոսային հովանավոր
Ալաշկերտ ՖԱ	Joma	BAGRATOUR | HUAWEI
Արարատ ՖԱ	Nike	AWI International
Արարատ-Արմենիա ՖԱ	Joma	TASHIR
Գանձասար-Կապան ՖԱ	Adidas	ZCMC
Երևան ՖԱ	Kipsta	-
Լոռի ՖԱ	Puma	TOTO GAMING
Նոա ՖԱ	Umbro	
Շիրակ ՖԱ	14 Fourteen	-
Ուրարտու ՖԱ	Jako	-
Փյունիկ ՖԱ	Puma	TOTO GAMING

ՀՀ ֆուտբոլի 2019/2020 թթ. Բարձրագույն խմբի առաջնության մասնակից ակումբների մարզահագուստի ապրանքանիշները շատ զանազան են: 2019/2020թթ. մրցաշրջանի ընթացքում միևնույն ապրանքանիշի մարզահագուստից են օգտվել «Արարատ-Արմենիա» և «Ալաշկերտ» ֆուտբոլային ակումբները՝ «Ջոմա» ապրանքանիշի, ինչպես նաև «Փյունիկ» և «Լոռի» ֆուտբոլային ակումբները՝ «Պումա» ապրանքանիշի: Մյուս բոլոր ակումբների խաղային հանդերձանքների ապրանքանիշերը չեն համընկնում միմյանց հետ:

Վերջին տարիներին հայկական ակումբները ավելի մեծ ուշադրություն են սկսել դարձնել իրենց մարքեթինգային և մերչենդայզինգային քաղաքականությանը, ինչի արդյունքում տարեց տարի ավելի շատ ակումբներ են ձեռքբերում տիտղոսային հովանավորներ: ՀՀ ֆուտբոլի 2019/2020թթ. Բարձրագույն խմբի առաջնության 10 ակումբներից 6-ը ունեին տիտղոսային հովանավորներ: Բացառությամբ «Ալաշկերտ» ՖԱ-ի, ով ուներ միանգամից 2 տիտղոսային հովանավոր, մյուս բոլոր ակումբները ունեին 1-ական տիտղոսային հովհանավորներ:

Հատկանշական է, որ ակումբների գերակշիռ մասի մոտ տիտղոսային հովհանավորները հանդիսանում են ակումբի կամ ակումբի սեփականատերերի հետ փոխկապակցված ընկերություններ:

Ակումբների մարզաշապիկների տիտղոսային հովանավորների ծագումը



- Տեղական ընկերություններ
- Արտասահմանյան ընկերություններ

Ակումբների մարզաշապիկների տիտղոսային հովանավորների կապը ակումբների հետ



- Ակումբների հիմնադիրների կամ սեփականատերերի հետ փոխկապակցված ընկերություններ
- Ոչ փոխկապակցված ընկերություններ

ԳԼՈՒԽ 6.
ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

ՀՀ ՄԱՐԶԵՐՈՒՄ 20Մ/40Մ ՉԱՓՍԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԽՈՏԱԾԱԾԿՈՎ ԽԱՂԱԴԱՇՏԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

2018 թվականին ՀՖՖն մշակել է երկարաժամկետ խոշոր ծրագիր, այն է՝ 5 տարում ՀՀ բոլոր մարզերում կառուցել 20մ/40մ չափսերի արհեստական խոտածածկով 300 խաղադաշտ: Ծրագիրը իրականացվում է FIFA Forward ծրագրի շրջանակներում:

Ծրագրի նպատակը Հայաստանում մասսայական ֆուտբոլի զարգացումն է, ինչպես նաև հնարվորինս մեծ թվով մարդկանց ներգրավումը ֆուտբոլային ընտանիք: Խնդիր է դրված ՀՀ բոլոր համայնքներում անհրաժեշտ հարմարություններ ստեղծել ֆուտբոլ խաղալու համար: 2019 թվականին ծրագրի շրջանակներում կառուցվել է 39 խաղադաշտ: Խաղադաշտերը կառուցվել են ՀՀ Արարատի (12 խաղադաշտ), Արագածոտնի (11 խաղադաշտ), Լոռու (15 խաղադաշտ) մարզերում: Խաղադաշտերի կառուցման տեղադիրքերն ընտրվել են ՀՖՖ կողմից կատարված սոցիալական հարցումների և վերլուծությունների հիման վրա:

ՄԱՐԶՉԱԿԱՆ ԱՐՏՈՆԱԳՐԵՐԻ ԹԱՐՄԱՑՄԱՆ ԱՆՆԱԽԱԴԵՊ ԴԱՍԸՆԹԱՑ

2019 թվականի դեկտեմբերի 9-10-ը Երևանում անցկացվեց ՈՒԵՖԱ-ի և Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կողմից կազմակերպված մարզչական արտոնագրերի թարմացման առաջին դասընթացը: Դասընթացն աննախադեպ էր իր ձևաչափով և մասնակիցների քանակով: Մարզչական արտոնագրերի թարմացման դասընթացին մասնակցում էին 250 հայ մարզիչներ:

Միջոցառման ընթացքում դասախոսություններով հանդես են եկել մարզչական կրթության եվրոպացի մի շարք բարձրակարգ մասնագետներ՝ ՀՖՖ Տեխնիկական տնօրեն Խինես Մելենդեսը, «Լիդս Յունայթեդ» թիմի տնօրեն Վիկտոր Օրտան, մարզական սննդի մասնագետ Անտոնիո Էսկրիբանո Սաֆրան և կլինիկական և մարզական սննդի մասնագետ Անտոնիո Էսկրիբանո Օկոնը, , Իսպանիայի կանանց Մ-20 հավաքականի գլխավոր մարզիչ Պեդրո Լոպեսը, իսպանացի անվանի մարզիչ Այտոր Կարանկան, թիմերի կառավարման և մարտավարության մագիստրոս Խուան Խոսե Վիլյան և այլք:

ՀԱՎԱՔԱԿԱՆԻ ՆՈՐ ՄԱՐԶԱՇԱՊԻԿՆԵՐ

2020 թ. հունվարի 1ից Macron ընկերությունը պաշտոնապես դարձել է ՀՖՖ տեխնիկական հովանավորը: Պայմանագիրը նախատեսված է մինչև 2023 թ. դեկտեմբերի 30ը:

Պայմանագրի շրջանակներում Macron ընկերությունը Հայաստանի տարբեր տարիքային ազգային հավաքականների (թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց) համար թողարկել է մարզահագուստային առանձնացված գիծ: Հայաստանի հավաքական թիմերը առաջին անգամ հանդես են գալու հայկական զարդանախշերով ձևավորված մարզաշապիկներով: Իր պատմության մեջ առաջին անգամ Հայաստանի ազգային հավաքականի համար թողարկվել է նաև 3-րդ մարզաշապիկ:

Macron ընկերության հետ համագործակցության շրջանակում բացվել է ՀՖՖ առաջին պաշտոնական խանութ-սրահը (Fan store), որտեղից հնարավոր է ձեռք բերել ինչպես ազգային հավաքականի խաղային մարզաշապիկները, այնպես էլ այլ մարզահագուստ և աքսեսուարներ:

ԳԼՈՒԽ 7.
ՍԵՄԻՆԱՐՆԵՐ ԵՎ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐ-ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀՖՖ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ 2020/2021ԹԹ. ՄՐՑԱՇՐՋԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (16.01.2020Թ.)

ՀՖՖ ակումբների արտոնագրման ներկայացուցիչների հետ ճանաչողական հանդիպմանը մասնակցել են 2020/2021թթ. արտոնագրման մրցաշրջանին մասնակցելու հայտ ներկայացրած բոլոր ակումբների ներկայացուցիչները (12 ակումբ): Հանդիպմանը ներկայացվել է ՀՖՖ Արտոնագրման բաժնի քաղաքականությունը, բաժնի առջև դրված նպատակային խնդիրները: Հանդիպման մասնակիցներին է ներկայացվել նաև ՀՖՖ Ակումբների արտոնագրման կանոնակարգի նոր հրատարակությունը (2019թ. խմբագրություն) և մանրամասն քննարկվել դրանում տեղ գտած բազմաթիվ բովանդակային փոփոխությունները:

ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐ-ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀՀ ԱՌԱՋԻՆ ԽՄԲԻ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ 2020/2021ԹԹ. ՄՐՑԱՇՐՋԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (21.02.2020Թ.)

2020 թվականի Փետրվարի 21-ին՝ ՀՖՖ գրասենյակում, կայացել է ճանաչողական սեմինար-հանդիպում բոլոր այն ակումբների հետ, որոնք ցանկություն էին հայտնել մասնակցելու ՀՀ Առաջին խմբի 2020/2021թթ. մրցաշրջանի առաջնությանը: Հայկական ակումբային ֆուտբոլի պատմության մեջ առաջին անգամ ներդրվել է Առաջին խմբի առաջնության ակումբների արտոնագրման գործընթացը, որին մասնակցելը և համապատասխան արտոնագիր ստանալն ակումբների համար պարտադիր պահանջ է ՀՀ Առաջին խմբի առաջնության մասնակցության համար:

Հանդիպման ընթացքում մասնակիցներին ներկայացվել է ակումբների արտոնագրման գործընթացը և դրա էությունը: Մասնակիցները մանրամասն ծանոթացել են ՀՀ Առաջին խմբի ակումբների արտոնագրման կանոնակարգին (2020թ. խմբագրություն)՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով Առաջին խմբի առաջնության համար սահմանված պարտադիր պահանջներին ենթակառուցվածքային, իրավական, կադրային և վարչական, ինչպես նաև մարզական չափանիշների շրջանակում:

ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍԵՄԻՆԱՐ (26.03.2020Թ.)

ՀՖՖ Արտոնագրման բաժնի կողմից կազմակերպած ֆինանսական չափանիշի վերաբերյալ սեմինարհանդիպմանը մասնակցել են ՀՀ Բարձրագույն խմբի ակումբների ֆինանսական և արտոնագրման պատասխանատուները: Սեմինարը նվիրված էր արտոնագրման 2020/2021թթ. մրցաշրջանի ֆինանսական չափանիշին: Սեմինար-հանդիպումն անցկացվել է հեռավար կապի միջոցով՝ կորոնավիրուսային համավարակի տարածման պատճառով:

Հեռավար կապի միջոցով մասնակիցները ծանոթացել են Ակումբների արտոնագրման ֆինանսական չափանիշի առկա խնդիրներին և ոլորտում կատարված փոփոխություններին ու մարտահրավերներին: Հանդիպման ընթացքում ներկայացվել են ՈՒԵՖԱի Ակումբների արտոնագրման և արդար խաղի կանոնակարգի ֆինանսական չափանիշի բոլոր դրույթները, ինչպես նաև մանրամասն ներկայացվել են ՀՖՖ Արտոնագրման կանոնակարգի բոլոր առանձնահատկությունները:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԵՐԿՐՊԱԳՈՒՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ (09.03.2020Թ.)

ՀՖՖ արտոնագրման, ինչպես նաև մրցումների կազմակերպման և անցկացման բաժինների նախաձեռնությամբ ՀՖՖ գրասենյակում տեղի է ունեցել կլոր-սեղան հանդիպում, որին մասնակցել են ՀՖՖ Արտոնագրման և Մրցումների կազմակերպման և անցկացման բաժնի ներկայացուցիչները և ՀՀ Բարձրագույն խմբի առաջնության ակումբների երկրպագուները:

Հանդիպման ընթացքում քննարկվել են այնպիսի թեմաներ, ինչպիսիք են առաջնության խաղացանկը, ֆուտբոլային հանդիպումների ժամանակ կազմակերպչական և կարգապահական խնդիրները, ՀՖՖ և ակումբների երկրպագուների միջև հաղորդակցության բարելավումը:

Հեղինակ՝

Արսեն Զաքարյան — **ՀՖՖ Արտոնագրման բաժնի մասնագետ**

«ՀՖՖ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 2020»ի ստեղծմանը նպաստել են՝

Վահան Բերակչյան — **ՀՖՖ Արտոնագրման բաժնի պետ**
Նաիրա Աբրամյան — **ՀՖՖ Արտոնագրման բաժնի պետի տեղակալ**
Նունե Սարգսյան — **ՀՖՖ Արտոնագրման բաժնի մասնագետ**

Լուսանկարներ՝

Հակոբ Բերբերյան
Գևորգ Ղազարյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ
Արտոնագրման բաժին

Հասցե՝ Խանջյան 27, Երևան, 0010, Հայաստան
Հեռ.՝ +37411888808
Էլ. փոստ՝ licensing@ffa.am
Կայք՝ www.ffa.am